Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Կ. Մարդանյանի անվան Բերդի թիվ 3 հիմնական

Թեմա՝ Անհատական ուսուցման պլանով աշխատելու կարևորությունը

Վերապատրաստող, մենթոր՝ Էմմա Քոսակյան

Ուսուցիչ՝ Անժելա Ծատուրյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն……3

Գլուխ 1. Անհատական ուսուցման պլան ……5

1.1. Անհատական ուսուցման պլանը որպես ԿԱՊԿՈՒ աշակերտի կրթության կազմակերպման գործիք…… 5

1.2. Անհատական ուսուցման պլանը կազմող թիմի անդամները և նրանց գործառույթները……6

1.3. Անհատական ուսուցման պլանի փուլերը……11

Գլուխ 2. Անհատական ուսուցման պլանով աշխատելու առանձնահատկությունները……15

2.1. Հետազոտական աշխատանքի ընդհանուր բնութագիրը……16

2.2 Հետազոտական աշխատանքի արդյունքների ամփոփում……21

Եզրակացություն……23

Առաջարկություններ……25

Գրականության ցանկ……26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2014 թ. դեկտեմբերի 1-ին ընդունվեց ՝Հանրակրթության մասին՝ ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին՝ ՀՀ օրենքը, որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության: Ներառական կրթության համակարգի զարգացումը ՀՀ օրենքով սահմանվեց որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունք և կրթության որակի ապահովման երաշխիք:

Հանրակրթական ուսումնական հաստատությունում բոլոր աշակերտների համար առարկայական ծրագրի և կրթական գործընթացի մատչելիությունն ապահովելու նպատակով նախատեսվում է տրամադրել մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին՝ նաև առարկայական ծրագրերի, ուսումնական մեթոդների և կրթական միջավայրի հարմարեցումներ, որոնք համապատասխանում են նրա կրթության առանձնահատուկ պայմանների կարիքին:

Այսպիսով, որպեսզի հնարավոր լինի հանրակրթական ուսումնական հաստատության յուրաքանչյուր սովորողի համար հավասարապես ապահովել որակյալ կրթություն, նրա կրթության կազմակերպման առանցքը պետք է կազմի ներառական կրթական միջավայրը:

ԱՈՒՊ-ը, լինելով գրավոր ուսուցման համագործակցային պլանավորում, կառուցվում է աշակերտների կարիքներից, ուժեղ կողմերից և հետաքրքրություններից բխող՝ հանրակրթական պետական չափորոշչով սահմանված ուսումնական բնագավառների համար՝ ըստ հանրակրթության աստիճանների, կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույն

պահանջների հենքի վրա: Հանրակրթության համակարգում անցումը համընդհանուր ներառական կրթության ենթադրում է նաև միջավայրային և ծրագրային հարմարեցումներ: Որպես ուսուցման ու ուսումնառության կազմակերպման անհատական պլանի միջոց՝ սահմանվել է ՝անհատական ուսուցման պլան՝ հասկացությունը, որը հանրակրթական պետական և առարկայական չափորոշիչների, ծրագրերի և երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված փաստաթուղթ է, որը սահմանում է սովորողի կրթության տարեկան նպատակը, խնդիրները և դրանց հասնելու գործողությունները:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել անհատական ուսուցման պլանով աշխատելու կարևորությունը :

Հետազոտության խնդիրներն են.

1. Ուսումնասիրել թեմայի վերաբերյալ առկա տեսական նյութերը:
2. Աշխատել անհատական ուսուցման պլանով :
3. Կատարել արդյունքների ամփոփում և վերլուծություն, ներկայացնել եզրակացություն:

Հետազոտության վարկածը՝

Մենք կարծում ենք, որ ԱՈՒՊ-ով դասավանդումը բարձրացնում է ուսուցման արդյունավետությունը:

Հետազոտության մեթոդները.

- փաստաթղթերի ուսումնասիրություն
- զրույց-քննարկում
- դիտում

Հետազոտության ընտրանքը՝ տարրական դպրոցի աշակերտներ:

Գլուխ 1. Անհատական ուսումնական պլան

1.1. Անհատական ուսուցման պլանը որպես ԿԱՊԿՈՒ աշակերտի կրթության կազմակերպման գործիք

ԱՈՒՊ-ը հաստատված ձևաչափին համապատասխան գրավոր մշակվող թիմային պլանավորում է: Այն կառուցվում է սովորողի կարիքների, ուժեղ կողմերի ու հետաքրքրությունների և հանրակրթական պետական չափորոշիչների և ծրագրերի հիման վրա:

Հայաստանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր երեխայի կրթությունը կազմակերպվում է նրա ԱՈՒՊ-ում սահմանված նպատակներին համապատասխան: ԱՈՒՊ-ը, լինելով կրթական գործընթացի պլանավորում, փաստաթուղթ է, որը սահմանում է սովորողի կրթության կազմակերպման տարեկան նպատակը, խնդիրները և դրանց հասնելու գործողությունները: ԱՈՒՊ-ը մշակվում է այն սովորողների համար, ովքեր ունեն դժվարություններ կրթության մեջ և սահմանված կարգով ճանաչվել են որպես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող: Այս սովորողները չեն կարողանում յուրացնել հանրակրթական ուսումնական ծրագրերը՝ առանց համապատասխան ծրագրային կամ միջավայրային հարմարեցումների: Այսպիսով՝ ԱՈՒՊ-ը կազմվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար:

ԱՈՒՊ-ը պետք է ունենա հատուկ ձևակերպված վերջնանպատակ, տարեկան նպատակ, կարճաժամկետ խնդիրներ՝ վերջնանպատակին և տարեկան նպատակին հասնելու համար և տարեկան ծրագիր:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ ԱՈՒՊ-ը գրավոր փաստաթուղթ է, որտեղ սահմանվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի ուսումնական, սոցիալական և ֆունկցիոնալ առանձնահատուկ նպատակները:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի պատճառները հետևյալ խանգարումներն են.

- ձայնի և խոսքի
- տեսողության
- լսողության
- ինտելեկտուալ (մտավոր)
- շարժողական

1.2. Անհատական ուսուցման պլանը մշակող թիմի անդամները և նրանց գործառույթները

Բոլոր այն մարդիկ, ովքեր իրենց գործունեության ընթացքում առնչվում են ԿԱՊԿՈ երեխաների հետ, պետք է մասնակցեն ԱՈՒՊ-ի գրելուն: ԱՈՒՊ-ի մշակման և իրականացման գործընթացը հիմնված է համագործակցության և թիմային աշխատանքի սկզբունքների վրա, որտեղ յուրաքանչյուրը պետք է հստակ պատկերացնի իր դերն ու պարտականությունն այդ գործընթացում:

ԱՈՒՊ-ի թիմի անդամներն են.

- դասավանդող ուսուցիչները
- մանկավարժական աջակցության թիմը (հատուկ մանկավարժ, հոգեբան, սոցիալական մանկավարժ, լոգոպեդ և այլն)
- ուսուցչի օգնականը
- սովորողը (հնարավորության դեպքում)
- սովորողի ծնողը
- դպրոցի տնօրենը
- դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը:

Սովորողի ԱՈւՊ-ի կազմման համար առաջնային պատասխանատվությունը կրում է դպրոցի տնօրենը: Տնօրենն ապահովում է ծնողի մասնակցությունը ԱՈւՊ-ի վերաբերյալ համապատասխան որոշում կայացնելու գործընթացին: Տնօրենն ապահովում է ԱՈւՊ-ի իրականացման համար աշակերտին տրամադրվող համապատասխան մանկավարժական աջակցության ծավալները, տևողությունն ու ժամանակահատվածը, հարմարեցված նյութերի ու պարագաների տրամադրումը:

Դպրոցի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը տնօրենի հետ միասին առաջնային պատասխանատվություն է կրում սովորողի ԱՈւՊ-ի գործնական կիրառման գործընթացներում՝ հանդիսանալով այդ բոլոր աշխատանքների և ԱՈւՊ-ում ներգրավված բոլոր կողմերի միջև արդյունավետ և թիմային համագործակցության գլխավոր համակարգողը: Նա մասնակցում է ԱՈւՊ-ի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացին, համակարգում է ԱՈւՊ-ի աշխատանքները՝ հստակ ներկայացնելով ԱՈւՊ-ի խմբի յուրաքանչյուր անդամի դերը, պարտականությունն ու համագործակցությունը՝ ԱՈւՊ-ի տարեկան նպատակների և խնդիրների իրականացման հարցերում: Դպրոցի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալն ապահովում է աշակերտի ընթացիկ և կիսամյակային ամփոփիչ գնահատման գործընթացի պատշաճ իրականացումը, ապահովում է, որպեսզի պատշաճ իրականացվեն ԱՈւՊ-ով առաջարկված և դպրոցի տնօրենի կողմից հաստատված կրթության առանձնահատուկ պայմանների հարմարեցումների և մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրումը սովորողին:

Աշակերտի ԱՈւՊ-ով պլանավորված տվյալ առարկայական ծրագրի հարմարեցման և արդյունքների գնահատման համար առաջնային պատասխանատվություն է կրում ուսուցիչը: Այս պատասխանատվությունը սկսվում է ԱՈւՊ-ի մշակման փուլից և շարունակվում ԱՈւՊ-ի իրականացման և գնահատման

փուլերում: Ուսուցիչը հանդիսանում է տվյալ աշակերտի համար ԱՈւՊ-ը սահմանելու որոշման կայացման գլխավոր դերակատարներից մեկը:

ԱՈւՊ-ի մշակման և իրականացման ընթացքում տվյալ ուսուցիչը մյուս ուսուցիչներին, մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամներին, դպրոցի տնօրենությանը և ծնողին տեղեկություն է տրամադրում աշակերտի առաջադիմության մասին, դիտարկումների միջոցով բացահայտում և մատնանշում է աշակերտի ուժեղ և թույլ կողմերը, մասնակցում է աշակերտի՝ տվյալ առարկայի տարեկան նպատակների և ուսումնառության կարճաժամկետ նպատակադրումների մշակմանը: Ուսուցիչը պլանավորում և իրականացնում է աշակերտի ԱՈւՊ-ով հարմարեցված առարկայական ծրագիրը, մշակում է աշակերտի առաջադիմության գնահատման մեթոդներն ու եղանակները, գնահատում է կիսամյակային և տարեկան արդյունքները: Ուսուցիչը շարունակական կապ է պահպանում աշակերտի մյուս ուսուցիչների, մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամների և ծնողի հետ: Նա առաջարկություններ է ներկայացնում կրթության առանձնահատուկ պայմանների և հարմարեցումների վերաբերյալ մյուս ուսուցիչներին, մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամներին, դպրոցի տնօրենությանը և ծնողին:

Մանկավարժահոգեբանական աջակցության խումբն աշխատում է ցանկացած աշակերտի հետ, ում մոտ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատմամբ պարզվել է այս կամ այն ֆունկցիայի որևէ աստիճանի խանգարում, որը դժվարացնում է, իսկ որոշ դեպքերում գրեթե անհնարին է դարձնում սովորողի կողմից իր ԱՈւՊ-ով սահմանված տարեկան վերջնարդյունքներին և նպատակադրումներին հասնելը՝ առանց լրացուցիչ հատուկ մանկավարժական, հոգեբանական և սոցիալականացմանը միտված աջակցության տրամադրման:

Մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամները խորհրդատվություն և անմիջական օժանդակություն են տրամադրում ուսուցիչներին՝

չափորոշիչներում, առարկայական ծրագրերում սահմանված բովանդակային նվազագույն պահանջները ԱՈՒՊ-ում պարզեցնելու և աշակերտի մտավոր և ֆիզիկական կարողությունների առավելագույն ներուժին հարմարեցնելու աշխատանքներում:

Ուսուցչի օգնականը ԱՈՒՊ-ի մշակման և գործարկման ողջ ընթացքում կապող օղակ է հանդիսանում տվյալ աշակերտի առարկայական ուսուցիչների, մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամների, ծնողի և տվյալ սովորողի միջև՝ փոխանակելով նրանց հետ ցանկացած տեղեկատվություն՝ կապված աշակերտի ուսումնական առաջընթացի և դեռևս առկա խնդիրների հետ: Ուսուցչի օգնականը ԱՈՒՊ-ի տարեկան նպատակներին և խնդիրներին ուղղված գործողությունների իրականացման ընթացքում ուսուցչի անմիջական աջակիցն է: Նա մշտապես մասնակցում է ԱՈՒՊ-ի վերաբերյալ խմբային ժողովներին, ինչպես նաև մշտադիտարկման, ընթացիկ գնահատման և կիսամյակային ու տարեկան ամփոփիչ գնահատման գործընթացներին:

Ծնողը ԱՈՒՊ-ի համագործակցային թիմի անդամ է: Նրա ներգրավվածությունը պետք է սկսվի իր երեխայի համար իրատեսական և նպատակահարմար անհատական ծրագրի վերաբերյալ որոշումների կայացման փուլից և շարունակվի ԱՈՒՊ-ի մշակման և դրա իրականացման փուլերում: Ծնողի մասնակցությամբ մշակվող ԱՈՒՊ-ը առավել իրատեսական է, քանի որ այն սահմանելիս հաշվի են առնվում աշակերտի մասին ծնողի տրամադրած շատ կարևոր տեղեկություններ երեխայի առողջության, տանը և համայնքում նրա դրսևորած նախասիրությունների, հետաքրքրությունների և հմտությունների վերաբերյալ, ինչպես նաև ներառում են ծնողի կողմից սովորողի ուսուցման գործընթացի կամավոր հանձնառությունները:

ԱՈՒՊ-ի իրականացման ընթացքում ծնողը հանդիսանում է ոչ միայն իր երեխայի շահերի լավագույն պաշտպանը, այլև կարևոր դերակատարում ունի դպրոցում սովորած գիտելիքների և հմտությունների գործնական կիրառման,

ամրապնդման, ընդհանրացման և պահպանման հարցում՝ շարունակելով այդ աշխատանքը նաև տանը:

Սովորողն է կազմում ԱՈւՊ-ի առանցքը և ողջ գործընթացի բոլոր փուլերի կենտրոնը, ուստի նրա հնարավոր մասնակցությունը ԱՈւՊ-ի մշակման գործընթացներին շատ օգտակար կլինի արդյունավետ և իրատեսական փաստաթուղթ ունենալու համար: Աշակերտի ներգրավվածության բնույթն ու աստիճանը կարող են տարբեր լինել՝ կախված մի շարք գործոններից, ինչպիսիք են, օրինակ՝ տարիքը, հասկանալու և հաղորդակցվելու կարողությունը:

Էական նշանակություն ունի նաև այն, որ ուսուցիչները, մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամներն ու ծնողներն աշակերտին օգնեն հնարավորինս լավ հասկանալու իր ուսուցման պլանավորման նպատակադրումները: Սովորողը կարող է՝

- մասնակցել ԱՈւՊ-ի՝ որպես իր համար ամենանպատակահարմար ծրագրի կազմելու որոշմանը,
- մասնակցել (մասամբ կամ լիարժեքորեն) իր ԱՈւՊ-ի մշակման, իրականացման և գնահատման գործընթացներին,
- ինքնագնահատման միջոցով բացահայտել և մատնանշել իր նախասիրությունները և ուժեղ կողմերը,
- մասնակցել իր կրթության երկարաժամկետ նպատակների և տարեկան վերջնարդյունքների՝ նպատակների սահմանմանը,
- մասնակցել իր ԱՈւՊ-ի քննարկումներին՝ ներկայացնելով իր ուսումնառության առաջընթացը խթանող կամ խոչընդոտող գործոնները,
- ինքնուրույն կամ այլոց հետ համատեղ գնահատել իր գրանցած առաջընթացը:

ԱՈւՊ-ը մշակելու համար թիմի հանդիպումը պետք է անցկացվի երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների վերաբերյալ եզրակացությունը

ստանալուց հետո 15 օրացուցային օրվա ընթացքում: Թիմի յուրաքանչյուր անդամ կարևոր տեղեկատվություն է բերում ԱՈՒՊ-ի հանդիպմանը:

ԱՈՒՊ-ը կազմող թիմը պետք է հավաքվի 6, իսկ անհրաժեշտության դեպքում՝ 3 ամիսը մեկ անգամ, որպեսզի վերանայի նպատակները և խնդիրները, քննարկի երեխայի ուսումնական առաջընթացը:

ԱՈՒՊ-ի նպատակներն ու խնդիրները կարող են վերագնահատվել և փոփոխվել երեխայի ուսումնառության ընթացքում, քանի որ երեխայի մեծանալու հետ փոխվում են նրա ուսումնառության կարիքները: ԱՈՒՊ-ը պետք է փոփոխվի ըստ անհրաժեշտության: Ծնողն իրավունք ունի ցանկացած ժամանակ պահանջել, որ երեխայի հետ աշխատող թիմը հավաքվի և վերանայի ԱՈՒՊ-ը, որպեսզի միջոցներ ձեռնարկի տարեկան նպատակներում և ընդհանուր ուսումնական ծրագրում ակնկալվող առաջընթացի բացակայության դեմ:

1.3. Անհատական ուսուցման պլանի փուլերը

Սովորողի կրթությունն անհատական ուսումնական պլանով կազմակերպելու որոշումը, երեխայի ծնողի գրավոր համաձայնության վրա, հաստատում է դպրոցի մանկավարժական խորհուրդը: Տվյալ սովորողի ԱՈՒՊ-ի վերաբերյալ որոշումն ընդունելուց անմիջապես հետո սկսվում է նրա ԱՈՒՊ-ի համագործակցային պլանավորման գործընթացը՝ չորս փուլով.

1-ին փուլ: ԱՈՒՊ-ի մշակման գործընթացի հիմնական ուղղությունների սահմանում.

- թիմի կազմավորում
- թիմի անդամների պարտականությունների սահմանում
- երկարաժամկետ նպատակների սահմանում

Առավել հավանական է ունենալ խելամտորեն պլանավորված ԱՈՒՊ այն դեպքում, երբ հետագայում ԱՈՒՊ-ը իրականացնող անձինք ԱՈՒՊ-ի շուրջ թիմային համագործակցության մաս են կազմում ՝ սկսած այս փուլից:

ԱՈՒՊ-ի երկարաժամկետ նպատակներն արտացոլում են այն համապատկերը, թե ինչի պետք է հասած լինի սովորողը տարրական, հիմնական և ավագ դպրոցներն ավարտելիս: Տվյալ սովորողի համար խելամտորեն և հստակորեն սահմանված երկարաժամկետ նպատակները էական նշանակություն ունեն՝ ըստ առարկայական ծրագրերի նրա ԱՈՒՊ-ի տարեկան վերջնարդյունքները սահմանելու համար: ԱՈՒՊ-ի երկարաժամկետ նպատակները պետք է պատասխանեն հետևյալ հարցին. տարրական, հիմնական կամ միջնակարգ դպրոցն ավարտելիս նվազագույնը ինչ գիտելիք, կարողություն և հմտություն կունենա սովորողը՝ ըստ ուսումնական առարկաների:Ամփոփիչ գնահատման արդյունքով չափվում է ԱՈՒՊ-ով նախատեսված երկարաժամկետ նպատակների և թիրախային հմտությունների իրականացման աստիճանը: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է, որ ԱՈՒՊ-ի տարեկան և երկարաժամկետ նպատակները լինեն իրատեսական, սահմանեն թիրախային հմտությունները:

Երբ արդեն թիմը սահմանել է սովորողի ԱՈՒՊ-ի երկարաժամկետ նպատակները, հաջորդ քայլն այն է, որ նրանք պետք է որոշեն անհրաժեշտ նվազագույն կարողությունների և հմտությունների այն շրջանակը, որոնք հնարավորություն են տալու նրան՝ հասնել այդ նպատակներին: Թիմի անդամները պետք է համաձայնության գան սովորողի համար ամենագլխավոր և առաջնահերթ կարողությունների և հմտությունների շրջանակը սահմանելու հարցում, որոնք կարող են բազմաթիվ լինել՝ ակադեմիական, հաղորդակցության, ինքնակազմակերպման, սոցիալական հմտությունների, սոցիալական շփումների և այլն:

2-րդ փուլ: Տեղեկատվության հավաքում, տրամադրում, առաջնահերթությունների սահմանում: Տարբեր աղբյուրներից սովորողի մասին տեղեկատվության հավաքում

(սովորողի նախասիրություններ, հաղորդակցման, սոցիալական հմտություններ, ակադեմիական ձեռքբերումներ, դպրոցում դրսևորած վարքագիծ, առողջական խնդիրներ): ԱՈՒՊ-ի թիմի կողմից ուսումնասիրվող սովորողի տեղեկատվական փաթեթը պետք է ներառի նրա անձնական գործի փաթեթը և առկա ուսումնական աշխատանքները:

Սովորողի անձնական գործի փաթեթը պետք է ներառի կրթության առանձնահատուկ պայմանների առաջին և երկրորդ մակարդակների գնահատման ողջ տեղեկատվությունը, անհրաժեշտ բժշկական տվյալները, սովորողի ֆունկցիոնալ զարգացման ընթացիկ, կիսամյակային և տարեկան գնահատման արձանագրությունները, նախորդ տարիների ԱՈՒՊ-ները և գնահատման արդյունքում կատարված առաջարկները:

Ուսումնասիրվող ուսումնական աշխատանքների փաթեթը պետք է ընդգրկի նմուշներ տետրերից, տեսանյութերից կամ ձայնագրություններից, վերջին անհատական կամ դասարանական ընթացիկ գնահատումները, ամփոփիչ գնահատումները կամ աշակերտի կարողունակության գնահատման այլ միջոցներ:

Սովորողի աշխատանքները դիտարկելիս շեշտը պետք է դրվի նրա ուժեղ կողմերի վրա և վեր հանվի նրա ունեցած դժվարությունների ընդհանուր պատկերը: Շատ կարևոր սկզբունք պետք է լինի, որ ցանկացած քննարկումների և տեղեկատվության տրամադրման կենտրոնում լինի և մնա սովորողին հաջողությանը հանգեցնող գործոնների բացահայտումը և ոչ թե խնդիրների, թերությունների ցուցակը:

Նախորդ փուլում սահմանված՝ սովորողի կրթության երկարաժամկետ նպատակների, իսկ այս փուլում՝ սովորողի մասին ընդհանուր ճանաչողական տվյալների համապարփակ նկարագրությունը սովորողի կրթության տարեկան նպատակի առաջնահերթությունները սահմանելու ելակետն է:

Սովորողի ուսումնառության և կրթության առանձնահատուկ պայմանների կարիքին վերաբերող ընդհանուր տեղեկություններն ուսումնասիրելուց հետո ԱՈՒՊ-ի թիմի անդամները սահմանում են առաջնահերթությունները:

3-րդ փուլը ԱՈՒՊ-ի մշակման և գրի առնելու փուլն է: Այս գործընթացն իրականացվում է ԱՈՒՊ-ի օրինակելի ձևի էլեկտրոնային տարբերակի վրա: Այստեղ գրի են առնվում սովորողի անձնական տվյալները և նրա մասին ընդհանուր տեղեկությունները և երկարաժամկետ նպատակները, տարեկան նպատակները, ուսումնառության կարճաժամկետ նպատակադրումները՝ խնդիրները, և դրանց իրականացման ռազմավարությունը, սովորողի համար անհրաժեշտ հարմարեցումները և աջակցության եղանակները: Ամբողջ տեղեկատվությունը ԱՈՒՊ-ի էլեկտրոնային օրինակելի ձևում գրանցելուց հետո այն տպվում և ստորագրվում է թիմի անդամների և գործընթացի բոլոր մասնակիցների կողմից, ապա այն հաստատվում է դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից:

ԱՈՒՊ-ում անհրաժեշտ է նշել հետևյալ տեղեկատվությունը.

1. Սովորողի անձնական տվյալները
2. Սովորողի մասին ընդհանուր տեղեկություններ
3. Երեխայի վերջին գնահատումների վերաբերյալ տեղեկատվություն
4. Ուսումնական առարկաներ՝ ըստ հանրակրթական պետական չափորոշչի ուսումնական բնագավառների
5. Բնագավառներ, որտեղ դրսևորվում են սովորողի ուժեղ կողմերը և կարիքները
6. Ուսումնական առարկաներ, որոնց համար անհրաժեշտ է ԱՈՒՊ
7. Կրթության կազմակերպման համար անհրաժեշտ հարմարեցումներ
8. ԱՈՒՊ-ի մշակման և իրականացման , գնահատման ընթացքում առաջարկվող գրականության և այլ ռեսուրսների ցանկ
9. Սովորողի կրթության երկարաժամկետ նպատակները

10. Երկարաժամկետ նպատակին հասնելու համար անհրաժեշտ նվազագույն կարողություններ և հմտություններ
11. Սովորողի կրթության տարեկան նպատակներն ըստ առարկաների
12. Խնդիրներ՝ կարճաժամկետ նպատակադրումներ
13. ԱՈՒՊ-ի գնահատման ժամկետներ (ընթացիկ, կիսամյակային, տարեկան)
14. Անցումային պլաններ (հաջորդ տարվա համար կամ տարրականից՝ միջին դպրոց և միջին դպրոցից՝ ավագ դպրոց)

ԱՈՒՊ-ով սահմանված տարեկան նպատակների իրատեսական և ողջամիտ չափանիշներ կարող են համարվել հետևյալները.

- որոշակի են՝ գրված հստակ, ընկալելի, ոչ խրթին ձևով,
- չափելի և գնահատելի են,
- հասանելի են՝ իրատեսական են տվյալ սովորողի համար,
- նպատակահարմար են՝ հարմարեցված են տվյալ սովորողի գիտելիքների, կարողությունների, հմտությունների ներուժին,
- չափորոշիչահենք են՝ սահմանված են հստակ ժամանակահատվածի համար, կարող են ձեռք բերվել մեկ ուսումնական տարվա ընթացքում:

Ուսումնական տարվա ընթացքում սովորողի ձեռքբերումներին օժանդակելու համար նրա տարեկան յուրաքանչյուր նպատակ բաժանվում է ավելի փոքր և առավել իրագործելի քայլերի, որոնք կոչվում են ուսումնառության կարճաժամկետ նպատակադրումներ՝ խնդիրներ: Կարճաժամկետ ուսումնառության այս նպատակադրումները՝ խնդիրները, և դրանց իրականացումը գրանցելիս ԱՈՒՊ-ի թիմը պետք է մատնանշի այդ խնդիրների իրականացման միջոցով սովորողի տարեկան նպատակի ձեռքբերման մեջ ընդգրկված գլխավոր բաղադրիչները կամ առաջադրանքները, դրանք գրի առնելիս կիրառի ողջամիտ չափանիշներ, սահմանի այդ կարճաժամկետ արդյունքներին հասնելու ժամկետները, ինչպես նաև՝ սահմանի դասավանդման այն ռազմավարությունները և հարմարեցումները, որոնք օգնելու են

սովորողին հասնելու այդ կարճաժամկետ արդյունքներին: Թիմը պետք է մատնանշի այն անձին կամ անձանց, ովքեր պատասխանատու են դասավանդման իրականացման կամ գործողության կատարման համար, հատկորոշի այն պայմանները, որոնցում աշակերտը պետք է կատարի առաջադրանքը(օրինակ՝ օժանդակությամբ կամ առանց դրա):

Կարճաժամկետ նպատակադրումները՝ խնդիրները, ըստ թեմատիկ պլանի պետք է հասանելի և իրագործելի լինեն ճիշտ այն ժամանակահատվածում, որը սահմանված է դասարանի մյուս աշակերտների համար, որոնց համար ԱՈւՊ սահմանված չէ: Եթե սովորողը չի հասնում կարճաժամկետ նպատակադրմանը, ապա խորհուրդ է տրվում վերադիտարկել ու փոխել նպատակադրումը, այլ ոչ թե երկարաձգել դրան հասնելու ժամանակը:

4-րդ փուլ: Իրականացում և գնահատում:

- տարեկան առնվազն 2 պաշտոնական հանդիպում ԱՈւՊ-ի վերանայման նպատակով,
- առաջարկությունների քննարկում, նոր մեթոդների ընտրություն:

ԱՈւՊ-ը պլանավորվում և իրականացվում է դաս-պլանների միջոցով: Ինչպես դասարանի մյուս աշակերտների, այնպես էլ ԱՈւՊ-ով սովորող աշակերտի յուրաքանչյուր դասը ուսուցչի կողմից պետք է պլանավորված լինի: Տարբերությունը միայն այն է, որ եթե ընդհանուր դասարանի համար դասի պլանավորումը հիմնված է տվյալ առարկայի թեմատիկ պլանի վրա, ապա ԱՈւՊ ունեցող սովորողի դասի պլանավորումը բխում է իր ԱՈւՊ-ով հարմարեցված թեմատիկ պլանավորումից: Կարիք չկա դասի պլանը տվյալ սովորողի համար առանձին գրել, սակայն ընդհանուր դաս-պլանում պետք է հստակ երևա, թե ինչպես է պլանավորվել ԱՈւՊ ունեցող սովորողի մասնակցությունը դասին՝ հիմնված ընդհանուր դասարանի համատեքստում իր ներուժին համապատասխան բովանդակային բաղադրիչների ուսուցման գործընթացների հիման վրա:

Գլուխ 2. Անհատական ուսուցման պլանով աշխատելու առանձնահատկությունները

2.1. Հետազոտական աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Մեր հետազոտական աշխատանքն իրականացրել ենք Տավուշի մարզի Բերդ քաղաքի Կ.Մարդանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցում: Հետազոտությունն իրականացրել ենք դպրոցի տարրական օղակի աշակերտների շրջանում:

Դեռևս առաջին դասարանում նկատվեց, որ դասարանի աշակերտներից մեկը՝ Ռ. Հ.-ն ուսման առաջադիմությամբ հետ է մնում իր համադասարանցիներից: Առաջին դասարանի ավարտին նա ճանաչում էր հայոց այբուբենի ոչ բոլոր տառերը, չէր կարողանում կատարել հնչյունային վերլուծություն, դժվարանում էր տարբերակել գույները, երկրաչափական պատկերները:

Երկրորդ դասարանում սովորողի կարիքը ներկայացվեց գնահատման: Գնահատվելուց հետո պարզ դարձավ, որ Ռ. Հ.-ի մոտ առկա է ինտելեկտուալ (միջին աստիճանի) խանգարում:

Համագործակցային թիմի կողմից մշակվեց անհատական ուսուցման պլան: Որպես տարեկան նպատակ՝ Հ.-ն պետք է հետզհետե սովորեր հայերենի այբուբենի բոլոր տառերը, տարբերակեր գույներն ու երկրաչափական պատկերները: Սահմանվեց նպատակ, համաձայն որի՝ Հ.-ն երկրորդ դասարանի ավարտին կկարողանար ուսուցչի օգնությամբ կարդալ և գրել միավանկ բառեր: Այս նպատակներին հասնելու համար շաբաթվա ընթացքում աշակերտի հետ դասաժամերից հետո լրացուցիչ աշխատում էին հատուկ մանկավարժը և դասվարը: Գրավոր աշխատանքների ժամանակ ուսուցչի օգնականն օժանդակում էր սովորողին, որպեսզի վերջինս կարողանար համադասարանցիների հետ գրել բառային թելադրություններ:

Տարվող աշխատանքների սկզբում Ռ. Հ.-ն դժվարությամբ էր հաղթահարում իր առջև դրված խնդիրները: Նա դժվարությամբ էր մտապահում տառերը, ինչը հաստատում էր հնչյունները տառերի հետ կապելու հմտությունը զարգացնելու անհրաժեշտությունը:

Հ.-ի պատմության հիմքում ընկած էին անհատական ուսուցման պլանի երեք առանձնահատկությունները.

1. Անհատական ուսուցման պլանը սահմանում էր սովորողի անհատական նպատակները:
2. Անհատական ուսուցման պլանը նախատեսում էր հատուկ ծառայություններ, որոնք երեխան կարող էր ստանալ իր անհատական նպատակներին հասնելու համար:
3. Անհատական ուսուցման պլանը պահանջում էր ուսուցիչների, մասնագետների և ծնողների ակտիվ համագործակցություն:

Ինչպես վերը նշվեց՝ Հ.-ն բոլոր տառերը սովորելու համար լրացուցիչ օժանդակության, աշխատանքի կարիք ուներ, որոնք նրան տրամադրվեցին: Այս նպատակը կոնկրետ էր և չափելի, ինչը նշանակում է, որ ուսուցիչը կարող էր առաջընթացին հետևել ողջ տարին: Կարելի էր հստակորեն գրանցել, թե քանի տառ է սովորել աշակերտը, ըստ այդմ՝ հարմարեցնել ուսուցումն ու միջամտությունը: Մեր սահմանած նպատակը նաև հասանելի էր և իրատեսական:

Աշխատանքի ընթացքում երբեմն Հ.-ն մոռանում էր հնչյուն-տառ կապը և արդյունքում դժվարանում էր կարդալ գոնե միավանկ բառեր: Թիմն աշխատեց նաև այս ուղղությամբ:

Աշխատանքներ էին տարվում նաև գույներն ու երկրաչափական պատկերները տարբերակելու ուղղությամբ:

Տարված աշխատանքների արդյունքում երկրորդ դասարանի ավարտին աշակերտն արդեն ճանաչում էր հայերենի այբուբենի բոլոր տառերը, ուսուցչի ուղղորդմամբ գրում էր միավանկ բառեր, գիտեր և տարբերակում էր երկրաչափական պատկերներն ու գույները: Կարելի էր ուրախությամբ փաստել, որ մենք հասել էինք անհատական ուսուցման պլանով սահմանված տարեկան նպատակի իրականացմանը:

Երրորդ և չորրորդ դասարաններում կազմված անհատական ուսումնական պլանների առանցքում կարդալու և գրելու որակական հատկանիշների բարելավումն էր: Ռ. Հ. –ն դժվարությամբ էր համակցում հնչյունները և ստանում բառեր, դժվարանում էր նաև թելադրություններ գրելու ժամանակ: Անհատական ուսումնական պլաններում սահմանված իրատեսական քայլերի շնորհիվ աստիճանաբար զարգացավ աշակերտի կարդալու որակը: Նա սկսեց ավելի վարժ կարդալ, հասկանում էր կարդացածի բովանդակությունը: Եթե նախկինում 1 րոպեի ընթացքում կարդում էր ընդամենը 17 բառ, այժմ անհամեմատ շատացել է 1 րոպեի ընթացքում կարդացած բառերի քանակը(40- 42 բառ): Կարողանում է ուսուցչի օգնությամբ վերարտադրել իր ընթերցածը:

Հ.-ն ինքնուրույն չէր կարողանում գրել թելադրվող տեքստը: Նա թելադրությունների ժամանակ հետ էր մնում համադասարանցիներից: Բոլոր գրավոր աշխատանքների ժամանակ նրան օգնում էր ուսուցչի օգնականը: Անհատական ուսուցման պլանով տարված աշխատանքների արդյունքում այսօր աշակերտը կարողանում է գրել թելադրություններ՝ իհարկե, թույլ տալով ուղղագրական սխալներ և տառաբացթողումներ:

Ճիշտ է՝ Հ.-ի նպատակներն ակադեմիական էին, բայց այդ նպատակների չիրականացման արդյունքում կարող էին առաջանալ նաև սոցիալիզացիայի հետ կապված դժվարություններ:

Մինչդեռ՝ այսօր անհատական ուսումնական պլանով դրված իրատեսական նպատակների և տարված աշխատանքի արդյունքում Ռ. Հ.-ն մասնակցում է համադպրոցական միջոցառումներին, ջերմ հարաբերություններ ունի համադասարանցիների հետ, հաջողություններ է արձանագրում ֆիզկուլտուրայի, երբեմն՝ նաև շախմատի և մաթեմատիկայի դասաժամերին՝ հնչեցնելով ճշմարիտ և մտածված պատասխաններ:

Վերջերս մաթեմատիկա և մայրենի առարկաներից տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքներից Ռ. Հ.-ն կարողացավ ինքնուրույն ստանալ բավարար գնահատականներ:

Ծնողի ցանկությամբ սովորողը 2022-2023 ուսումնական տարվա վերջին կմասնակցի չորրորդ դասարանցիների գիտելիքների ստուգմանը:

Մեկ այլ աշակերտի մոտ առկա էր աուտիզմ: Նա չէր կարողանում բանավոր հաղորդակցվել, բայց հասկանում էր ուրիշների խոսքը: Մատների վրա կարողանում էր հաշվել մինչև հինգը: Դասապրոցեսում կարողանում էր հասկանալ որոշ թեմաներ: Ճանաչում էր տարբեր կենդանիներ, բայց դեռ գույները չգիտեր: Կարողանում էր ինքնուրույն տեղաշարժվել դպրոցի տարածքում, հիշել կարևոր սենյակների տեղը, չուներ ճաշելու կամ զուգարանից օգտվելու խնդիր: Դժվարանում էր կենտրոնանալ դասի ժամանակ, շատ ընկերներ չուներ: Աշակերտի անհատական ուսուցման պլանը կազմող թիմը որոշեց ուշադրություն դարձնել դասարանում նրա կենտրոնանալու, ընկերանալու և գույները սովորելու վրա: Սովորողի համար սահմանված նպատակները թիմին օգնեցին որոշելու այն աշխատանքները, , որոնց վրա պետք է ուղղեին իրենց ջանքերը առաջիկա տարվա ընթացքում: Անհատական ուսուցման պլանը կազմելիս վերը նշված հմտությունները ուսուցչին, լոգոպեդին և ուսուցչի օգնականին օգնեցին պլանավորելու նրա հետ անցկացվելիք պարապմունքները: Աշակերտի մայրիկի գաղափարները նույնպես ներառվեցին անհատական ուսուցման պլանի նպատակներում: Մայրն անհանգստացած էր, որ

աղջիկը հուզվելիս կամ զայրանալիս հուզական պոռթկումներ է ունենում: Քանի որ նա չէր խոսում, այդ պոռթկումներն իր զգացածն արտահայտելու ձևերն էին: Աշակերտին հատկացրին հաղորդակցման գիրք, որը օգնում էր նրան արտահայտելու իր զգացմունքները: Դրանից հետո ուսուցչի օգնականը պատրաստեց տարբեր հույզեր պատկերող նկարներ, որոնցից օգտվելով՝ աշակերտն արտահայտվում էր, ցույց էր տալիս, թե ինչ է զգում:

Մշակելով երեխայի հույզերի կառավարմանն ուղղված սոցիալական նպատակ՝ թիմը երեխայի ընտանիքի պահանջները ներառեց անհատական ուսուցման պլան կազմելու գործընթացում:

Ուսումնական տարվա վերջին աշակերտը ուսուցչի ցուցումով մատնացույց էր անում առարկաներն ըստ գույնի (50% ճշտությամբ):

2.2. Հետազոտական աշխատանքի վերլուծություն

Մեր հետազոտության շրջանակներում կատարեցինք հարցում ուսուցիչների շրջանում: Մեր նպատակն էր՝ պարզել ուսուցիչների կարծիքն անհատական ուսուցման պլանով աշխատելու արդյունավետության մասին: Հարցմանը մասնակցած 23 ուսուցիչների 67%-ը գտնում էր, որ անհատական ուսուցման պլանով աշխատանքը մեծացնում է ուսուցման արդյունավետությունը, 14%-ը գտնում էր, որ այն որևէ դրական նշանակություն չունի, իսկ 19%-ը պատասխանեց, որ դրական արդյունք նկատելի է անհատական ուսուցման պլանով առաջնորդվող ոչ բոլոր աշակերտների մոտ:



Աղյուսակ 1

Եզրակացություն

Այսպիսով՝ մանրամասնորեն ուսումնասիրելով անհատական ուսուցման պլանի վերաբերյալ առկա տեսական նյութերը և գործնականում կիրառելով դրանք, եկանք այն եզրակացությանը, որ ԱՈՒՊ-ով դասավանդումը բարձրացնում է ուսուցման արդյունավետությունը: Անհատական ուսուցման պլանն ամենակարևոր գործիքներից է, որով նպաստում ենք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ՝ կրթության իրավունքի իրականացմանը դպրոցում: Անհատական ուսուցման պլանը ներկայացնում է կրթության լավագույն գործելակերպի օրինակ, որովհետև կա բազմամասնագիտական թիմ, որը գաղափարներ է տալիս երեխաների նպատակներիվերաբերյալ: Անհատական ուսուցման պլանը հետևում է քայլ առ քայլ մոտեցմանը և իրականացվում է համաձայն ժամանակացույցի: Իրենից ենթադրում է համագործակցային աշխատանք, բարձրացնում է կրթության արդյունավետությունը:

Նպատակները կարող են լինել ակադեմիական (միտված ուսումնառությանը), սոցիալական (միտված ընկերներ ձեռք բերելուն և նրանց հետ հաղորդակցվելուն) կամ ֆունկցիոնալ (միտված անկախ ու ինքնուրույն ապրելու հմտություններին):

Եթե անհատական ուսուցման պլանը կառուցվում է փաստերի հենքի վրա, համագործակցային է, ապա անպայման կտա իր դրական արդյունքը: Կարևոր ենք համարում նաև, որ թիմի անդամները հստակ պատկերացնեն իրենց դերը անհատական ուսուցման պլանի կառուցման գործում, ինչպես նաև համագործակցեն իրար հետ:

Ուսումնասիրելով <<Անհատական ուսուցման պլանով աշխատելու կարևորությունը>> թեման՝ վստահորեն կարող ենք փաստել, որ մեր առաջադրած վարկածը հաստատվեց: Ահավասիկ, անհատական ուսուցման պլանով առաջնորդվելը մեծապես նպաստում է աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, հեշտացնում է աշակերտի ուսումնական գործընթացը՝ այն դարձնելով առավել մատչելի և նպատակային: Նշենք նաև, որ անհատական

ուսուցման պլանը կանոնակարգում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հետ տարվող աշխատանքը, ինչն ավելի արդյունավետ է դարձնում ուսուցչի և թիմի մյուս անդամների աշխատանքը:

Առաջարկություններ

- Ծնողներին և աշակերտներին միշտ ընդգրկել անհատական ուսուցման պլանի մշակման գործընթացում:
- ԱՈՒՊ-ի նպատակները մշակելիս օգտվել կոնկրետ, չափելի, հասանելի, իրատեսական և ժամկետային մոտեցումներից:
- Ըստ անհրաժեշտության՝ անհատական ուսուցման պլանում անդրադառնալ ակադեմիական, ֆունկցիոնալ և սոցիալական նպատակներին:
- Թիմի անդամների միջև սերտ համագործակցային հարաբերություններ ձևավորել:
- ԱՈՒՊ-ը կազմելուց առաջ համակողմանիորեն ճանաչել երեխային:

Գրականության ցանկ

1. Թադևոսյան Ս. <<Անհատական ուսուցման պլանի մշակման մեթոդական ուղեցույց-ձեռնարկ>>, 2016 թ.:
2. Միքայելյան Օ. Ս.<<Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան>> ուսուցչի ձեռնարկ, 2010 թ. :
3. ՀՀ Հանրակրթության պետական չափորոշիչ՝ arlis. am
4. hmk.am
5. www.unicef.org